ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ---------- 2010թ. N ---Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի ապրիլի 12-ի «Երևան քաղաքի խորհրդանիշերի մասին» N 85-Ն որոշումը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևանի խորհրդանիշերի պատրաղիր օգտագործման այլ դեպքերը և կարգը՝ համաձայն N 1, N 2, և N 3 հավելվածների։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Հաստատված է Երևանի ավագանու
«--» ------2010թ. հ.----որոշմամբ

ԵՐԵՎԱՆԻ ԶԻՆԱՆՇԱՆԻ
ՊԱՐՏԱԴԻՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Երևանի զինանշանը պարտադիր օգտագործվում է՝

1. Երևանի վարչական շրջանների ղեկավարների նստավայրերի շենքերի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Երևանի ենթակայության կազմակերպությունների զբաղեցրած շենքերի վրա:
2. Երևանի ավագանու անդամների և քաղաքապետի, քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Երևանի ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների վկայականների, կազմակերպությունների անվանատախտակների, կնիքների, դրոշմակնիքների, ձևաթղթերի, ինչպես նաև պաշտոնական փաստաթղթերի վրա:
3. Երևանում կազմակերպվող քաղաքային նշանակության միջոցառումների և տոնակատարությունների, այդ թվում՝ «Երևանի օր» տոնակատարության և քաղաքային այլ տոների, միջոցառումների, արարողությունների, փառատոնների ընթացքում:
4. Երևանի քաղաքապետի կողմից տրվող հուշամեդալների, մեդալների, կրծքանշանների, շնորհակալագրերի, պատվոգրերի, ինչպես նաև պարգևների և պատվավոր կոչումների վկայականների վրա:
5. Երևանի քաղաքապետի երդման արարողության ընթացքում:
6. Երևանի պաշտոնական համացանցային կայքում՝ http:www.yerevan.am/:
7. Երևանի տարածքում օտարերկրյա պետության (քաղաքի) զինանշանի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում այլ պետության (քաղաքի) զինանշանի չափերը չեն կարող գերազանցել Երևանի զինանշանի չափերը:
8. Երևանի զինանշանը օտարերկրյա պետության (քաղաքի) զինանշանի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում Երևանի և օտարերկրյա պետության (քաղաքի) զինանշանները պետք է տեղադրվեն միևնույն հարթության վրա:

9. Երևանի զինանշանը օտարերկրյա պետության (քաղաքի) զինանշանի հետ միաժամանակ տեղադրվելու անհրաժեշտության դեպքում Երևանի զինանշանը պետք է տեղադրվի տվյալ շենքի ձախ կողմից (դեմքով դեպի այդ շենքը):

Եթե միաժամանակ տեղադրվում է կենտ թվով մի քանի զինանշան, ապա Երևանի զինանշանը պետք է տեղադրվի դրանց մեջտեղում:

Եթե միաժամանակ տեղադրվում են զույգ թվով (2-ից ավելի) զինանշաններ, ապա Երևանի զինանշանը պետք է տեղադրվի կենտրոնից ձախ:

10. Երևանի զինանշանը և Հայաստանի Հանրապետության զինանշանը միաժամանակ տեղադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

11. Երևանի զինանշանը <<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան կարող է օգտագործվել միայն սոցիալական գովազդում:

12. Արգելվում է Երևանի զինանշանի առանձին տարրերի օգտագործումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

Հաստատված է Երևանի ավագանու

«--» ------2010թ. հ.----որոշմամբ

ԵՐԵՎԱՆԻ ԴՐՈՇԻ
ՊԱՐՏԱԴԻՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Երևանի դրոշը պարտադիր օգտագործվում է՝

1. Երևանի վարչական շրջանների ղեկավարների նստավայրերի շենքերի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Երևանի ենթակայության կազմակերպությունների զբաղեցրած շենքերի վրա:

2. Երևանում կազմակերպվող քաղաքային նշանակության միջոցառումների և տոնակատարությունների, այդ թվում՝ «Երևանի օր» տոնակատարության և քաղաքային այլ տոների, միջոցառումների, արարողությունների, փառատոների ընթացքում:

3. Երևանի քաղաքապետի կողմից կազմակերպվող պաշտոնական ընդունելությունների և արարողությունների բացման և փակման ընթացքում:

4. Երևանի պաշտոնական համացանցային կայքում՝ http:www.yerevan.am:

5. Երևանի տարածքում օտարերկրյա պետության (քաղաքի) դրոշի հետ միաժամանակ Երևանի դրոշը տեղադրելու դեպքում այլ պետության (քաղաքի) դրոշի չափերը չեն կարող գերազանցել Երևանի դրոշի չափերը:

Երևան քաղաքի դրոշը օտարերկրյա պետության (քաղաքի) դրոշի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում Երևանի և օտարերկրյա պետության (քաղաքի) դրոշները պետք է տեղադրվեն միևնույն հարթության վրա:

6. Եթե միաժամանակ տեղադրվում է կենտ թվով մի քանի դրոշ, ապա Երևան քաղաքի դրոշը պետք է տեղադրվի դրանց մեջտեղում:

Եթե միաժամանակ տեղադրվում են զույգ թվով (2-ից ավելի) դրոշներ, ապա Երևանի դրոշը պետք է տեղադրվի կենտրոնից ձախ:

7. Երևանի դրոշը և Հայաստանի Հանրապետության դրոշը միաժամանակ տեղադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

8.Երևանի դրոշը <<Գովազդի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան կարող է օգտագործվել միայն սոցիալական գովազդում:

9. Երևանի քաղաքապետի երդման արարողության ժամանակ պետք է տեղադրված լինի Երևանի դրոշը:

10. Երևանի դրոշը պետք է բարձրացված լինի լուսաբացից մինչև մայրամուտ, իսկ համապատասխան լուսավորության դեպքում՝ նաև գիշերային ժամերին:

11. Երևանի դրոշը իջեցվում է պաշտոնապես հայտարարված սգո օրերին կամ սգո արարողությունների ժամանակ՝ մինչև դրոշաձողի մեջտեղը: Դրոշի վերևի մասում ամրացվում է սև ժապավեն, որի երկարությունը հավասարեցվում է դրոշի երկարությանը:

12. Արգելվում է օգտագործել Երևանի դրոշի առանձին տարրերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

Հաստատված է Երևանի ավագանու

«--» ------2010թ. հ.----որոշմամբ

ԵՐԵՎԱՆԻ ՕՐՀՆԵՐԳԻ
ՊԱՐՏԱԴԻՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Երևանի օրհներգը պարտադիր օգտագործվում է՝

1. Երևանում հուշարձանների, հուշաքանդակների, հուշատախտակների և այլ ճարտարապետական և պատմական նշանակություն ունեցող կառույցների բացման հանդիսավոր արարողությունների ժամանակ:
2. Երևանում կազմակերպվող քաղաքային նշանակության միջոցառումների և տոնակատարությունների, այդ թվում՝ «Երևանի օր» տոնակատարության և քաղաքային այլ տոների, միջոցառումների, արարողությունների, փառատոների ընթացքում:
3. Երևանի քաղաքապետի երդման արարողության ժամանակ:
4. Երևան համայնքի կողմից հյուպատոսական և դիվանագիտական պատվիրակությունների ընդունելության արարողության ժամանակ՝ տվյալ երկրի մայրաքաղաքի համապատասխան օրհներգը հնչեցնելուց հետո:
5. Երևանի օրհներգը կատարվում է վոկալ, գործիքային, նվագախմբային, երգչախմբային, նվագախմբային–երգչախմբային տարբերակներով կամ ձայնագրությունը հնչեցնելով:
6. Օրհներգի կատարման ժամանակ բոլորը հոտնկայս են (դրոշի առկայության դեպքում՝ դեմքով շրջված դեպի դրոշը):
7. Տեղական ինքնակառավարման մարմինների կամ այլ պաշտոնական պատվիրակության մասնակցությամբ օտարերկրյա պետությունների տարածքում անցկացվող պաշտոնական ու հանդիսավոր արարողությունների և միջոցառումների ժամանակ Երևանի օրհներգը հնչում է սույն կարգի և տվյալ օտարերկրյա պետության օրենսդրությանը համապատասխան:
8. Արգելվում է օգտագործել Երևանի օրհներգի առանձին տարրերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ՝ օրենք/ 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են Երևանի խորհրդանիշները՝ Երևանի զինանշանը, դրոշը և օրհներգը: Երևանի զինանշանի և դրոշի նկարագրությունը, ինչպես նաև Երևանի օրհներգը արդեն իսկ սահմանվել են Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի ապրիլի 12-ի «Երևան քաղաքի խորհրդանիշերի մասին» ընդունված N 85-Ն որոշմամբ և դրան կից հավելվածներով /N 1, N 2, N 3/:

Այսպիսով, օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և ավագանու, քաղաքապետի, ինչպես նաև Երևանին ենթակա կազմակերպությունների կողմից Երևանի խորհրդանիշների պատրաստիր օգտագործման հետ առնչվող հարաբերությունները, այդ թվում՝ խորհրդանիշների առանձին տարրերի օգտագործման արգելքի սահմանման, Երևանի զինանշանը կամ դրոշը օտարերկրյա պետության (քաղաքի) զինանշանի կամ դրոշի հետ միաժամանակ տեղադրման խնդիրը, քաղաքային նշանակության միջոցառումների, տոնակատարությունների, պաշտոնական ընդունելությունների և արարողությունների ժամանակ և մի շարք այլ դեպքերում Երևանի խորհրդանիշների պարտադիր օգտագործման խնդիրները կարգավորելու անհրաժեշտությամբ է պայմանավորված Երևան քաղաքի ավագանու «Երևանի խորհրդանիշների պատրաստիր օգտագործման այլ դեպքերը և կարգը սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունումը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի խորհրդանիշների պատրաստիր օգտագործման այլ դեպքերը և կարգը սահմանելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ